ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

03 հուլիսի 2019թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի
աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Գալստյան,

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և 81-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև Ազգային ժողովի աշխատակարգի VIII գլուխը՝ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը ներկայացնում է գրավոր առաջարկներ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի կողմից ներկայացված և առաջին ընթերցմամբ ընդունված «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի և կից փաթեթի (կոդ՝ Պ-133) վերաբերյալ:

Առդիր՝ 05 թերթ:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095 Երևան, Բաղրամյան 19 (+374 11) 513 423
www.brightarmenia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և 81-րդ հոդվածի 1-ին մասը՝ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունն իր 2019 թվականի հուլիսի 08-ի նիստում

ՈՐՈՇԵՑ

Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի կողմից ներկայացված և առաջին ընթերցմամբ ընդունված *«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի և կից փաթեթի* (կոդ՝ *Պ-133*) վերաբերյալ ներկայացնել գրավոր առաջարկություններ:

126 Է. Մարուքյան _____

125 Գ. Գորգիսյան _____

115 Ա. Բաբաջանյան _____

116 Ա. Խաչատրյան _____

117 Ա. Սամսոնյան _____

118 Հ. Բաբայան _____

119 Ա. Եղիազարյան _____

120 Ա. Կոստանյան _____

121 Կ. Սիմոնյան _____

122 Ս. Գրիգորյան _____

123 Ս. Ալեքսանյան _____

124 Գ. Բաղդասարյան _____

127 Մ. Թանդիլյան _____

128 Է. Անդրեասյան _____

129 Ռ. Ստեփանյան _____

130 Տ. Սիմոնյան _____

131 Հ. Այվազյան _____

132 Ս. Մինասյան _____

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095 Երևան, Բաղրամյան 19 (+374 11) 513 423
www.brightarmenia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

08 հուլիսի 2019թ.

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ
ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի Պետական-իրավական
հարցերի մշտական հանձնաժողովի
նախագահ ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոնայք,

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և 81-րդ հոդվածի 1-ին մասը՝ ներկայացնում ենք հետևյալ առաջարկություններն առաջին ընթերցմամբ ընդունված «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի և կից փաթեթի (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ, կոդ՝ Պ-133) վերաբերյալ.

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
0095 Երևան, Բաղրամյան 19 (+374 11) 513 423
www.brightarmenia.am

1. Նախագծերի փաթեթով առաջարկվում է սահմանել, որ՝

– *Եթե ինքնավար մարմնի* ***(հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով)*** *անդամի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն օրենքով վերապահված է Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությանը, իսկ Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները մեկից ավել են, ապա Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները ինքնավար մարմնի անդամի համապատասխան թափուր պաշտոնում առաջադրում են նախապես համաձայնեցված՝ մեկ միասնական թեկնածու:*

– *Եթե Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությանը վերապահված ինքնավար մարմնի անդամի թափուր պաշտոնում օրենքով սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է Ազգային ժողովի կառավարող խմբակցությանը:*

Կրկին անգամ ընդգծենք, որ քանի որ Ազգային ժողովի իշխող խմբակցությունն է ձևավորում կառավարությունը, հետևաբար՝ այդ խմբակցությանն ու կառավարությանն առանձին թեկնածուներ առաջադրելու իրավունք վերապահելը կրում է խիստ ֆորմալ բնույթ: Այսինքն, կառավարության և Ազգային ժողովի իշխող կուսակցության կողմից առաջադրված թեկնածուները միևնույն քաղաքական ուժի կողմից առաջադրված անձիք են: Ազգային ժողովի խմբակցությունների միջև խնդրո առարկա պաշտոններում թեկնածու առաջադրելու հարցում փոխհամաձայնություն ձեռքբերելը չափազանց բարդ է, եթե ոչ անհնարին:

Ըստ այդմ, առաջարկվում է առաջինից երկրորդ ընթերցում կատարված փոփոխությունների և լրացումների համատեքստում մեկ անգամ ևս քննարկել հետևյալ առաջարկը.

Վերը մեջբերված (Պ-133 նախագծի 5-րդ հոդված) և նախագծերի փաթեթի՝ դրանցից բխող հոդվածներում կատարել փոփոխություն և նախատեսել, որ ինքնավար մարմինների (այդ թվում՝ հանրային ծառայությունները կարգավորող և տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովների) անդամներին (այդ թվում՝ նախագահին) հաջորդաբար առաջադրում են Ազգային ժողովի իշխող և ընդդիմադիր խմբակցությունները: Ընդ որում՝ իշխանական և ընդդիմադիր խմբակցություններից յուրաքանչյուրն առաջադրում է մեկական թեկնածու:

Առաջարկության ընդունմամբ՝ ինքնավար մարմիններում կարող են ընդգրկված լինել խորհրդարան անցած բոլոր քաղաքական հոսանքների կողմից ներկայացված մասնագետներ:

2. Ընդ որում, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել այն բոլոր օրենսդրական դրույթները, որոնք կարգավորում են հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար Ազգային ժողովի նախագահի կողմից ձևավորվող մրցութային խորհրդին: Այսինքն, ըստ էության, հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների մրցույթ այլևս չի հայտարարվելու: Իսկ առաջարկվող կարգավորումների պարագայում, քաղաքացիական հասարակության ինստիտուտները որևէ մասնակցություն չեն ունենալու կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորման ընթացքում, ինչը չի բխում այդ հանձնաժողովի բնույթից և ստեղծման նպատակից:

Միաժամանակ, Նախագծերի փաթեթով վերանայվում են հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջները, ինչի հիմնավորումները ևս փաստաթղթով չեն ներկայացվել և բացարձակապես անհասկանալի է պահանջների այդչափ մեղմացումը նման բարդ և կարևոր առաքելություն կրող հանձնաժողովի համար:

Այսպիսով, առաջարկում ենք Նախագծերի փաթեթից հանել Պ-133[5] նախագիծը, այսինքն՝ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքում չկատարել Նախագծերի փաթեթով առաջարկվող փոփոխությունները:

3. Հիմնավորման չի ենթարկվում նաև հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամի ստաժը 10 տարուց մինչև 5 տարի կրճատելու առաջարկը (Պ-133[3] նախագծի 1-ին հոդված), ***որը ևս առաջարկում ենք հանել փաթեթից՝ թողնելով ներկայումս գործող 10 տարվա ստաժի պահանջը:***

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ